203.7
Ц-84

VI 2/2

2004

203.7
Հ-84
1681
343-ԿԶ

# ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԸՍՏ ՆԱԽՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ.

1841 ՌՄՂ

1008
36153

Արդեամբք սբյ Աթոռոյս աշխատաւոր միաբան սպայազինացն շորապան Ծերունեաց զարդ մահտեսի գալուստեան ։

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ԱՌԱՔԵԼՈՑ




Եւ եցոյց ինձ զՔաղաքն Ս՟ը Եմ՟ . որ իջանէր յերկնից առ յԱՅ . տաճար ՚ի նմա էր Տր ամենակալն . և ճրագ լուսաւոր Գառն անմեղ .

# ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
## ԸՍՏ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ
## ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԿԱՂԱՆԴ ՏԱՐԵԳԼՈՒԽ՝ ՈՐ Է ՍԿԻԶԲՆ ՅՈՒՆՎԱՐԻ

Եթէ պատկեր աւուր շաբաթ լինի, կատարի տօն սրբոյն Բարսղի կեսարացւոյն, ըստ գրելոյ ի տօնացուցին. իսկ եթէ կիրակի լինի՝ յառաջ տօն կատարի. միայն օրհնութի. Փառաւոր։ Հարց՝ Նոր կիրակէի սաղ. և այլն ամ յարութն է ըստ կարգի։ Իսկ եթէ բշ. գշ. դշ. եշ. և ուր". հանդիպեսցի, յայնժամ կատարի տօն եկեղեցւոյ՝ ըստ այսմ կերպի։ Աղանեն յառեան Տր գի բազում, ձայնիւ։ զոյգ բուրվառ։ Յիշեսցուք։ Առաւօտ լուսոյ։ Հանգստեան շրկն՝ տէրունի։ ահ բկ, Փառաւոր։ Քարոզ, ձայնիւ։ Աղէ՛, եկեղեցւոյ՝ ըստ ձայնին։ Հարց ձնկ, Նոր կիւրակէին. Որ խոնարհեցար, իւր սարօքն։ երգ, Տան քում։ Տէր



թա

Թագաւորեաց ։ քարոզ՝ Սրբասացուք ։ Սէ տծ՝ որ խաչեցար ։ մկ գձ , Յայսօր ցնծան դասք ։ քրզ՝ Սուրբ եկեղեցեաւս ․ Կեցո ․ տղ՝ Ի մէջ տաճարիս և առաջին ։

Ճաշուն՝ զոյգ կոչնակ ։ Ժամամուտ , Զխաղաղութի շնորհեա՛ ։ շրկն գձ , Յայսօր ուրախացեալ ։ Գիրք և Աւետարան՝ ըստ պատշաճի ։ սրբասացութի , Հրեշտակային ։ Երեկոյին՝ քարոզ՝ Սրբասացուք ։ Հմբ տկ , Որ վերըստին նորոգեցեր ։ քրզ՝ Սէ եկեղեցեաւս ․ Կեցո ․ տղ՝ Ի մէջ տաճարիս ։

ՅՈՒՆՎԱՐԻ Դ

Երեկոյին զոյգ կոչնակ՝ և նախատօնակ յաղագս Ճրագալուցի տաւուր Ծննդեան քրի ։ շրկն բձ , Ուրախացիր սրբուհի , Խոր սարօքն ։ մեծ՝ Ուրախացիր Ծածկին վեր՝ ։ ապա Թէ կնքակի Հանդիպի Ճրագալոյցն ,



մեծ

մեծ՝ Ծագումն հրաշալի · ըստ որում մանկունք ոչ առին յաւուր կերակէլի ։

---

ՅՈՒՆՎԱՐԻ Ե

Երեկոյին զոյգ կոչնակ · զկնի մէջ պատարագին , պատարագիչն զգեստաւորել , հանդերձ միաբանութ՟ վարդապետօք՝ քահանայիւք՝ սարկաւագօք և դպրօք , խնկովք և մոմեղինօք երթան ի սեղանն ասելով

շարական ը֊կ ,

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ հովիւքն երգեն ընդ

հրեշտակս տան աւետիս աշխարհի ։

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի · որդիք մարդկան օրհնեցէք · զի

վասըն մեր մարմնացաւ ։

Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ · ոչ մեկնելով ի հօրէ



ի

’Ի սուրբ այրին բազմեցաւ ։

Այսօր ցնծան երկինք ’ի վերուստ մեծա-
պայծառ աւետեօք ․ և արարածք ամ՟ ըղ-
ձեցան հանդերձ փրկուե՟ ։

Այսօր յայրին ընծայեցաւ քս՟ որդին այ՟ ․
և հրեշտակաց բազմութիւքն յերկնից յեր-
կիր վայր իջեալ ։

Այսօր հովուացըն տեսեալ զարդարուե՟
արեգակն ․ և ընդ հրեշտակս երգէին
փառք ’ի բարձունս այ՟ ։

’Ի հօրէ ծագեցար լուսաւորել զարա-
րածս ․ արդարութեան արեգակըն տէր
փառըք քեզ ։

Ծընար ’ի յայրին ընծայեցաւ բեթղե-
հէմ ․ արդարուե՟ ։

Հովուաց յայտնեցար երկրպագեալըդ ’ի
մոգուց ․ արդարուե՟ ։

Եւ մեք երգեսցուք որ ’ի կուսէն մար-
մնացար ․ արդարուե՟ ։


զկնի

Օկնի՝ Արթինէ ։ աւետարան ղուկասու ,
Եւ հովիւքն էին . 2 գլուխ՝ 8 համար ։
վերջ , Փառք ի բարձունս այ՝ և յերկիր
խաղաղութի ի մարդիկ հաճութի . 14 համր ։
Եւ զփառք ի բարձունսն մինչև ի կէսն
ասիցեն , և ապա զմնացորդ աւետարանն ,
Եւ եղև իբրև . վերջ , որպէս պատմե-
ցաւ նոցա . 20 համր ։ ապա զմնացեալն ի
փառք ի բարձունսէն՝ երգեսցեն , Եւ
յամ ժամ ։ երգ , Արեգակն արդարութե ։
Ի վայելչութի սրբոց ։ քրզ՝ Մե զածածինն .
Աղց . աղ՝ Ընկալ տէր զաղաչանս ։ քրզ՝
Մե խաչիւս . աղ՝ Պահպանեա ։

ՅՈՒՆՎԱՐԻ Զ

Ի հինգերորդ ժամու գիշերոյ՝ հարկանի
կոչնակ . հրց և մեծ՛՛ յաւագ խորանն աւի ։
Ի ճաշուն՝ զոյգ կոչնակ . և զկնի որ պա-


տարա

տարագլին և ջրօրհնէացն · շարական մի ,
Սրբդականն արդարուն ասելով զոլբա-
զան Պատրիարգն տանին ի վեհարանն ·
մաղթանք՝ Տու փառս որ խաչի · քրզ՝ Սէ
խաչիւս · մղ՝ Պահպանիչ · համբուրելով
զոր այն հայրապետին , և երթիցեն խա-
ղաղութբ , ի սեղան առ ի ճաշել :

ՅՈՒՆՎԱՐԻ Է

Ի ճաշու ժամուն՝ զոյգ կոչնակ · յիշատա-
կին զնի ի սուրբ Գլխադիրն · և համդէ-
սաւոր մը պատարագն յաւագ խորանն ·
զոյգ բուրվառ · ի Թաքօրին դպիրքն զոյգ
զոյգ ընթանալով քաղցրաձայն եղանակեն ,
Այսօր տօն է ծննդեան աւետիս , և այլն :
և զկնի մեյ մեյ տանն , մխաբերան երգեն
մանկունքն ասելով ,
Քս̃ ծնաւ , և յայտնեցաւ :

Օձնի գիշերային ժամերգութ՟՝ տմ՟ բաղ-մուք՟ երթան 'ի նը՟ յարութ՟ առ 'ի մատու-ցանել զհանդիսաւոր նը՟ պատարագն 'ի վե՟ կենսատու Գերեզմանին քի՟ : և յե-տոյ գան աստ 'ի սուրբ Ս. Թորոս , և եր-թան 'ի սեղան 'ի ճաշել : և յետ սեղանոյն գնան առ սրբազան Պատրիարգն առ 'ի օրհնել զպատրիարգարանն . շարական դ՟կ , Խորհուրդ մեծ . տես յերես 3 մինչև 5 , ըստ կարգի : և դարձեալ՝ շարական դ՟ձ , Լոյս 'ի լուսոյ 'ի հօրէ առաքեցար և մար-մնացար 'ի նը՟ կուսէն . զի վերըստին նորո-

գեսցես զապականեալն ադամ :

Դու ո՟րծ 'ի յերկրի երևեցար և ընդ-մարդկան շրջեցար . և փրկեցեր ըզոր-

եղեալըս յանիծիցն ադամայ :

Քեզ 'ի յերկնից վկայեն՟ հօր քո ձայն .

 ասէ

ասէ դա է իմ՝ որդի․ և որ Հոգին ըզ
քեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ ։
Ըզքեզ որ հոգւով և հրով մաքրեցեր
ըզմարդկան աղտեղութի․ ոչ զոմն և ըզ
փրկիչ ամենեքեան օրհնեսցուք ։
Փրկիչն երեւեցաւ և զաշխարհս ապրե֊
ցոյց ի պատրանաց թշնամւոյն․ որդէ֊
գրաւի չարչարելով ի ձեռըն մեկերոտե ։
Զոր կերպ ըզմեզ մեր այսօր՝ երևեալ
ապրեցուցին․ և զօրացուցանէ զաշխարհս
ամենայն ջըրոյն ։
Ըզգլուխս վիշապին փրկիչըն ջախջախեաց
ի յորդանան ի գետ․ և ինքեան իշխա֊
նութեամբ զամենեսեան ապրեցոյց ։
Օհէն մարդըն նորոգելով փրկիչն ի մը֊
կրտութ ի դաս այսօր․ զի զապականեալ
ըզբնութիւնս ջրով նորըս գործեաց է․ անա֊
պական ըզգեստ փոխարէն տալով մեզ ։



Ար

Մկրտութն քո̅ և սրբութին ամ սրտարածք · և
տայ մեզ թողութին մեղաց · ջրով և հո-
գւով վերասրբելով զմեզ ։

Ալէ՛՛ ձայնիւ , Տ՛ուն իսրայելի օրհնեցէք
զտէր · տուն ահարօնի օրհնեցէք զտէր ։
Տ՛ուն ղեւեայ օրհնեցէք զտէր · երկիւ-
ղածք տեառն օրհնեցէք զտէր ։

Օրհնեալ տր̅ ՚ի սիօնէ · որ բնակեալն է
յերուսաղէմ ։

Որթի ։

Աւետրն մատթէոսի , 3 գլուխ՝ 16 համար ·
Տէրն մեր Յս̅ Քս̅ ,

Եւ իբրեւ մկրտեցաւ յս̅ , ել վաղվաղակի
՚ի ջրոյ անտի · և ահա բացան նմա երկինք ·
և ետես զհոգին այ՝ զի իջանէր իբրեւ զա-
ղաւնի , և գայր ՚ի վերայ նորա ։
Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր · դա է
որդի իմ սիրելի , ընդ որ հաճեցայ ։

 և

և ապա ջուր օրհնեն ասելով երիցս ·

Օրհնեսցի և սրբեսցի ։ և յետոյ շ̃րհն դ̃ձ Մ̀ըկրըտի ք̃ս ։ քարոզ՝ Սե̃ խաչի̃ս ա-
ղաչեսցուք ։ աղօթք՝ Պահպանեա ։ տաղ՝

Այսօր ձայնըն հայրական յերկնից իջեալ հաճոյական սիրեցելոյ որդւոյ վկայ · այ յորդորէ գետ յորդորէ գետ յորդանան · աւետաւոր ձայնիւն երգէր · մեծ կարա-
պետըն յովհաննէս ։

ՓԵՏՐՎԱՐ ԺԴ · ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋ

Նորեկոյին՝ զոյգ կոչնակ ։ յետ յայսմաւուրքն և ըստ պատշաճի աւուր առեն նախօ-
սութ ։ ասի տաղ · մինչև զգեցեալ պատ-
րաստեսցին ամենեքեան ։

Ք̃ս փառաց թագաւոր · այսօր եկեալ յընծայումն · կատարելով նա զօրէնս · քառասնօրեայ գալըստեամբն ։

Օր մարգարէն եսայի · յառաջագոյն գու-
շակեաց · յերուսաղէմ քաղաքի · սիմէօնի
ծերունւոյն :

Ածային հրամանաւն · կայր ծերացեալ ի
տաճարին · ոչ տեսանէր նա զմահ · մինչեւ
տեսցէ նա զօծեալն :

Բարբառ եղեւ գալստեան · եւ ահագին
որոտման · տաճարապետն քն · որ յըն-
ծայումն էր եկեալ :

Ապա եղանեն ի սբ. էջմիածնի եկեղեցւոյ
դրանէն յարտաքս ի մեծ բակն՝ ասելով
շարական զձ ,

Այսօր անսկզբնական ծննդն հայրական
ծոցոյ բանն եկաւորեալ ի տաճարն · ըն-
ծայէ զարարածըս հօր ի յերկինս ,

Այսօր բարձեալ եղեւ ի գիրկըս ծերու-
նւոյն · որ բանիւն զարարածըս բարձեալ
ունի օրհնաբանեսցուք :

Այսօր և մեք հաւատացեալքս ընդ ծե-
րունւոյն սիմէօնի . ընդ ան համագոյ հօր
և որդ հոգւոյն . օրհնաբանեցուք ։
Այսօր ՚ի տաճարն եկեալ կենարարն . և
՚ի գիրկսըն սիմէօնի գգուեցաւ . զոր խընդ-
դութե՟ ընկալաւ եէմ ։
Այսօր երկիրս երկինք անուանեցաւ . զի
տէրըն տերանց իջեալ յերկնից ՚ի յերկիր .
և ընծայիլ յանձն առնու ՚ի գործոց ձե-
ռաց իւրոց ։
Այսօր հեթանոսաց լոյս ծագեցաւ ք՟ս ա՟ծ .
և փառք իւրում ժողովրդեանն իէլի ։
Աղ՛, Տեսին ա՟մ ծագք երկրի զփրկու-
ա՟յ մերոյ . Գ.իրք ։ Աղ՛ ձայնիծ, Օրհ-
նեալ եկեալ անուամբ տ՟ն, օրհնեալ որ
գալոց ես . Աւետարան ։ Նա և ընթեր-
նուն զաւաւտեան չորեսին Աւետարան-
սըն ։ Նախ՝ շարական ա՟ծ,


Մարիա

Մարմնացելդ ի կուսէն նախայաւիտեան
բանդ · այսօր ի տաճարն եկիր կատարել
զօրէնս · վասն փրկութեան հեթանոսաց :
Որ յանպարուեստ աթոռ նստիս քերովբէա
նեալդ ի հրեշտակաց · այսօր ի սիմէոնի
բառնալով ի գիրկս · որ ընծայեսցես ըզ
մեզ ի կենաւորդ յաւիտենից :
Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու
ամենեցուն · այսօր հայցմամբ ծերունւոյն
արձակեա՛ և զիս ըզբազմամեղս ի կապա
նաց մահու ի կենաւորդ յաւիտենից :
Ուրախ լեր յոյժ դուստր սիոնի · պայ
ծառացիր երուսաղէմ զարդարեա՛ ըզ
դրունս քո քաղաքդ այ :
Քանզի քս որ էնն ի յաթոռ փառաց ·
այսօր մտանէ ի քեզ նստեալ ի վերայ
յաւանակի նորոյ :
Ծերք և տղայք ոստովք ձիթենեօք՝ միա

բանու

բանուք երգէին · օրհնումն որդւոյ դա-
ւթի՝ օրհնեալ եկեալ անուամբ տն :
Պատկերակից եղեր հողեղէն բնութեանս ·
տնօրինեցար յարգանդի կուսին բանդ
տէրդ · ըզմերս վերանորոգել պատկեր :
Մարմնացեալ ի ճաշակմանէ նախաստեղ-
ծին ըզփառս միւսանգամ վերըստին շնոր-
հելով · ըզմերս վերանորոգել ի փառս :
Մըկրտեալ ի յորդանան ի յոհաննէ ·
ածային բնութեամբ մարմնովն զոր ի
մէնջն էառ · ըզմեզ լուսաւորելով ածային
ծագմամբն :
Օրհն՝ Որթիւ : աւետարան մատթէոսի ,
Մի համարիք եթէ եկի լուծանել ·
5 գլուխ՝ 17 համար : վերջ , յարքայութի
երկնից · 20 համար : Յերկրորդ՝ շէն դձ ,
Ամոր անսկզբնական · տես յերես 11 :
Օրհն՝ Որթիւ : աւետարան մարկոսի ,


Մու

Մայր վասն աւուրն այնորիկ · 13 գլուխ՝ 32 համր : վերջ, արթուն կացէք · 37 համր :

Երրորդ՝ շէկն դձ, Լոյս ի լուսոյ ի հօ-րէ առաքեցար, վերջ սուրբ · տես յերես 7 :

Օշնի՝ Սրթիճ : աւետարան ղուկասու, Հուր եկի արկանել · 12 գլուխ՝ 49 համր : վերջ, գլխոյն ընկիոնն · 59 համար :

: Եւ չորրորդն՝ շարական դէկ,

Այսօր ի տաճարն եկեր փրկիչ · և ծե-րունեալն ի գիրկս ընկալեալ ասէր · արդ-
արձակես ըզծառայս քո տէր :

Այսօր աշխարհի ցուցար լոյս · և փրկ-կութիւն ամենեցուն քո անձ · որ մարդա-
սէրդ ես կեցո ըզմեզ :

Այսօր խնամալի արեգակն · որ ծագեցար
ամենեցուն քո անձ · որ մար :

Ի սկըզբանէ բանն անձ մարմնացաւ ի կուսէն · այսօր գըրկուեցաւ ի տաճարին :



Եսայ

Խայտայր ալեօքըն ծերունին ած որդւոյն
՚ի գիրկս իւր . և օրհնէր զորդ աւետելով ։
Սորա արձակես զծառայս քո տէր՝ ըստ
բանի քում ՚ի խաղաղութիւն . զի տեսին
աչք իմ զփրկութիւն քո ։

Օրհնի՝ Սիմէոն ։ աւետարան յօհաննու ,
՚Ի սկզբանէ էր բանն . 1 գլու խ՝ 1 համր ։
մինչ , ՚ի ձեռն յսի քսի եղեն . 17 համր ։
Այս տեառնագրեսցեն զանդաստան ։
քարոզ՝ Սբ խաչիւս . ամ՝ Պահպանեա ։
և յետոյ սրբազան Պատրիարգն ինքնին յա
ռաջ մատուցեալ լուցանէ զերկու մոմսն ,
որք եդեալ կան յաշտանակն որ ՚ի մէջ ա
տենին . ասա՝ Լոյս ես խաղա՛ ։ Օրհնուի ։
ասելով շարական ած , Սարմնացեալդ
՚ի կուսէն . ( տես յերես 13 . ) դասադաս
կարգաւ եկեալ մոմնեն ՚ի միւս մեծ դըր
րանէն ՚ի ներքս ՚ի գաւիթն . և անդ պա


րառեալ

1008
36153

բառնալ ամեն հանգստեան շարական դ̃կ ,

Որ ի հօրէ առաքեցար . մարդասէր կա-
րող փրկիչ . և ընդ մեղուցեալ ընդ մարդն բը-
ժշկեցեր . ողորմեա՛ մեր հրաժարելոյս զոր
հրաւիրեալ առ քեզ կոչեցեր :

Որ ի խաչին բևեռեցար . մարդասէր կա-
րող փրկիչ . և զցօղ անապական արեա-
նդ ցօղեցեր տիեզերաց . ողորմեա՛ :

Որ զդժոխս աւերեցեր . և զգերեալ-
սըն փրկեցեր . և զարգելեալսն վերածեր
ի յոյս կենացըն յաւիտենից . ողորմեա՛ :

Քեզ եմք ապաւինեալ . ք̃ի մայր տ̃յ մերոյ :

Որ քան զերկինս բարձրագոյն մարիամ .
պարծանք եկեղեցւոյ . ք̃ի մայր տ̃յ :

Որ քան զարեգակն պայծառագոյն մա-
րիամ . մի՛ դադարիր բարեխօսել վասն
մեր . ք̃ի մայր :

Սր̃ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ

քում սէր ․ որով դատապարտեալ պարտե-
ցաւ Թշնամին ։

Սովաւ պահպանեա ըզժողովուրդս քո քս̅ ․
որով երկրպագեմք քեզ ը̅ հօր և հոգւոյդ ։
Փառք հօր ․ Ի քեզ ապաւինիմք քս̅ ․
որ դալոցդ ես խաչին ․ ոչ զի փրկեսցես
ըզմեզ յայնմ աւուր ահեղ ատենին ։
Այժմ և միշտ ․ Ընդ սրբս քո դասեա ․
և ընդ արդարոցն պսակեա ․ Ի տեղի ան-
կելոց հրեշտակաց ըզննջեցեալսն մեր
կարգաւորեա ․ որ ողորմածդ ես յամի ։

Զկնի՝ Որթին ։ աւետարան յօհաննու ,
12 գլուխ՝ 24 համար ։

Տէրն մեր Յս̅ Քս̅ ասէ ։

Ամէն ամէն ասեմ ձեզ ․ եթէ ոչ հատն
ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի , ինքն
միայն կայ ․ ապա եթէ մեռանիցի՝ բա-
զում արդիւնս առնէ ։



Որ

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր ես եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա հայրն իմ: Հոգւոց:

Եւ ապա մտանեն ի սուրբ եկեղեցին
ասելով շարական էկ,

Ի գալըստեան տ̃ըն դրունք երկնից բանին. և ճառագայթիւք անճառ լուսով
որ խաչն երևի:

Յերեսաց տ̃ըն լերինըք հալին. և ի յահէ փառաց նորա շարժին զօրութիք:

Աւետեօք տ̃ըն մեռեալք յառնեն. և ո̃գք
տ̃մ անճառ փառօք զարդարին:

Եւ ապա պաշտեն զերեկոյի ժամն.
և յետ այնորիկ ասելով շարական ձ̃ձ,



Աար

Մարմնացելոյ ՚ի կուսէն. (տե՛ս յերես 13.) տանին զորբաղան Պատրիարգն ՚ի վեհարանն ։ այնպէս և առաւօտեան ղինի մէջ պատարագ լին տանին ՚ի պատրիարգարանն , և յօրհնելն նորա՝ արձակին խաղաղութ ։

Ի ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՈՒՐԲԱԹ ՕՐՆ

Օհնի առաւօտու ժամուն , ըստ նախնեաց սովորութե երթան ՚ի վանս ասորոց համակ միաբանութբ և տէրունական ուխտաւորք յերկրպագութի մէջ տաճարին , որ յանուն Սբ. Թածնի կառուցեալ կայ , և է տուն մէջն մարկոսի աւետարանչին . ու ՚ի մատուցանել անդ զՍբ. պատարագն . և յետ գրքոյն՝ սակաւ ինչ ատենախօսութիւն լինի յաղագս տեղւոյն և կամաւոր ողորմութե ։

Օտրքաղան Պատրիարգն մեծաւ հանդէ-
սիւ տանին ՚ի սբ եկեղեցին Հրաշափառ
ասելով · ապա՝ Ուրախ լեր սբ · և այլն ։
և զկնի յայսմաւուրին, մինչև զգեստաւո-
րեսցին, ասի շարական ձ̃կ,

Այսօր մեծ աւետիք Ադամայ նախաս-
տեղծին տրւաւ · արի՛ որ նընջես լուսա-
ւոր եղև քեզ յարուցեալն քս · օրհ
հարցըն մերոց ։

Այսօր ձայն աւետեաց յեւայի գոչէն ըլ-
սելիս դըստերքն իւղաբերք · տեսաք յա-
րուցեալ զյարութիւնն քո ըղջքս · օրհ ։

Այսօր հրեշտակք յերկնից իջեալ տան
զաւետիս մարդկան · յարեաւ խաչեալն՝
և յարոյց ըզձեզ ընդ ինքեան · օրհ ։

Այսօր տէրն մեր յարեաւ · եկայք պարե-
ցուք ընդ հրեշտակս յաղթական երգով ·



օրհ

օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս։
Յորժամ սիւն լուսոյ ծագեաց որ երկեղե֊
ցուց . յարուցեն ի մեռելոց քո . օրհնեա :
Լու յեռայ եկեղեցին ի որ էջմիածնի դրա֊
նէն ի մեծ բանին՝ ասելով շարական ած ,
Յորժամ զատիկ մեր զենմամբ քոյի արա֊
ցաւք տօն ցընծութե . նորոգեալքս ի հնութե
մեղաց ասելով . քո յարեաւ ի մեռելոց :
Յորժամ հրեշտակըն լուսափայլ ի յերկնից
իջեալ . զաւրհնութըն ցոյց ըզպահապանսն . և
որ կանանցըն քարոզէր ասելով . քո յար :
Յորժամ նոր խորայել կոչեցեալք ի քո . ա֊
զատեալք արեամբ գառինն այ . պարեա֊
ցաւք ընդ երկնայնոցն ասելով . քո յար :
Յ.ձ'', Բեղ փայլեց օրհնութի . Գ.երգ :
Յ.ձ'' Ձայնիծ , Պատ յարուցել . Եւ տէրն :
Նաւ՝ շարական ած ,
Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին

կանայքն ՚ի գերեզմանն . ՚ի խնկել զանա-
պական մարմինն :

Եւ գտին ըզվէմն բարձեալ ՚ի դրանց
գերեզմանին . և լուեալ բարբառ ՚ի
հրեշտակէն . եթէ յարեաւ քս և խա-
փանեաց ըզմահ :

Եւ հանդիպեալ քո տէր առաքելոցն և
տուեալ ողջոյն կենդանարար . առաքեցեր
զնոսա ՚ի փրկութիւն տիեզերաց :

Օրհնի՝ Որթիւ : աւետարան յօհաննու ,
Յետ այսորիկ աղաչեաց . 19 գլուխ՝ 38 հմր :
մերձ , եդին զյիսուս . 42 համար :

Երկրորդ՝ շարական ձն ,

Առաքեցար ՚ի հօրէ բանդ տր ՚ի փրկու-
կութիւն ազգի մարդկան . օրհնեմք ըզ
քեզ քս տր :

՚Ի գերեզման իջեր թագաւոր անմահ .
և ՚ի հօրէ ոչ մեկնեցար . օրհնեմք :


՚Ի

Ի յերրորդ աւուր յարեար ա̃ծապէս · և
՛ի յերկինս համբարձար · փառք յարու-
թեան քո տ̃ր · օրհ :

Զկնի Ութին : աւետարան ղուկասու ;
Եւ ահա այր մի · 23 գլուխ՝ 50 համար :
մերձ , վասն պատուիրանին · 56 համար ·

Երրորդ՝ շարական ը̃ձ ;

Ի գերեզման քո կանխեցին կանայքն՝
զիւղս և զխունկս բերին · ՛ի պատիւ-
թաղման քո · զի զմեզ ընդհողացեալս
վերածեր ՛ի կեանս :

Փոխանակ իւղոյն զհաւատս անբիծս՝ և
զաղաչանս մեր ընդ առաւօտեան կա-
նանցն ընկալ · որք զողջոյն կենաց լուան
ևայլ ունկամբն :

Ետուն աւետիս առաքելոցն յարեաւ յա-
րուցիչն մեր աւերեաց ըզդժոխս · և
զթշնամին կապեաց ՛ի յանկոյծ կապանս :



զկնի

Օրհնի՛ Որթին ։ աւետարան մարկոսի ։
Եւ իբրեւ երեկոյ եղեւ ։ 15 գլուխ՝ 42 համր ։
վերջ , օծցեն զնա ։ 16 գլուխ՝ 1 համար ։

Չորրորդ՝ շարական ճկ ,

Քո յարութեանդ փառքդ վայելէ եր-
կայնամիտ տէր ։

Օրհնեալ է քո յարութիւնդ տէր ։ որ ըզ-
մահ մահու ծանուցեր քոյին կամաւոր
մահուամբդ ։ քո յա ։

Գոչումն ահեղ հրեշտակին ՚ի վիմէն՝ որ
քարոզէր առ իւղ կանայսն յարեաւ տէրն
՚ի մեռելոց ։ քո յա ։

Օրհնի՛ Որթին ։ աւետարան մատթէոսի ։
Եւ իբրեւ երեկոյ եղեւ ։ 27 գլուխ՝ 57 համր ։
վերջ , հանդերձ զօրականօքն ։ 66 համր ։

Հինգերորդ՝ շարական ճծ ,

Այ խաչն օգնական հաւատացելոց կանգ-
նեցաւ ՚ի յերկրի յաղթող թշնամւոյն ։

 եկայք

եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ։
Որդին որ բարձրացաւ ՚ի խաչին և
զմեռեալս մեզ փայտին ճաշակմամբն ․
՚ի սմա նորոգեալ կենդանացոյց ։
՚Ի միւսանգամ գալստեան ածորդւոյն ․
որ խաչն երևի և լուսաւորէ ․ զի նա է
յոյս հաւատացելոց ։
ողմն ձայնիւ, Եշանեցաւ առ մեզ լոյս ․
փոխ , ՚Ի կարդալ իմում լուար ինձ ած ։
Օրհնի՛ Որթիւ ։ աւետարան յօհաննու ,
Իսկ հրէայքն ․ 19 գլուխ՝ 31 համար ։
վերջ , յոր խոցեցինն ․ 37 համար ։
Եւ տեառնագրեսցեն զանդաստան ։ և
տալս գնան ՚ի գաւիթն՝ ասելով շինն ըէկ ,
Քս̃ յարեաւ ՚ի մեռելոց ։
Ընդ արշալուսն առաւօտուն կանխեալ
կանանցն ՚ի գերեզմանն ասելով ․ քս̃ յար ։
Եւ առ նս̃ ասէր հրեշտակն ․ զի խընդ-


րէք

րէք ըղկենդանին ընդ մեռեալս · քն յար ։
Փութացարուք մի ոք կանայք և պատ_
մեցէք աշակերտացն ասելով · քն յար ։
Եւ անդ շարադաս կանգնէին և ասեն
հանգստեան շիրմին տն , Որ անճառ ծնօրէ՛ ։
Որ անչարչարելիդ մար՛ ։ Որ Թաղմամբն՛ ։
Որ ըղհրեշտակին ըղձայնըն լըսեալ հիա՛ ։
Որ ըղհուրն տն յորովայնի քում կրեցեր՛ ։
Որ զանշօշափելին յէից ՚ի գիրկս քո բար՛ ։
Որ զանարատ բազուկըս քո ՚ի խաչին տա՛ ։
Որ զաշխարհակեցոյց բազկատարածուն՛ ։
Փառք հօր , Որ ըղմեռեալըն ՚ի ճաշակմա՛ ։
Այժմ և միշտ , Որ հրաւիրեցեր յանմա՛ ։
ողմն , Ի խորոց կարդացի ։ զկնի՝ Որթին ։
աւետարան յօհաննու , 5 գլուխ՝ 24 համր ։

Տէրն մեր Յն Քն ասէ ։

Ամէն ամէն ասեմ ձեզ · զի որ զբանն իմ
լսէ , և հաւատայ այնմ՝ որ առաքեացն

 զիս

զիս , ընդունի զկեանսն յաւիտենականս .
և 'ի դատաստան ոչ մտանէ , այլ փոխե-
ցաւ 'ի մահուանէ 'ի կեանս :

Ամէն ամէն ասեմ ձեզ . զի գայ ժամա-
նակ՝ և արդէն իսկ է , յորժամ մեռեալք
լուիցեն ձայնի որդւոյն այ . և որք լուի-
ցենն՝ կեցցեն :

Զի որպէս հայր ունի կեանս յանձին իւրում .
նոյնպէս ետ և որդւոյ ունել կեանս յան-
ձին իւրում . և իշխանութի ետ նմա դա-
տաստան առնել . և զի որդի մարդոյ է՝
ընդ այն զի՛ զարմանայք . զի եկեսցէ ժա-
մանակ՝ յորում ամենեքին որք 'ի գերեզ-
մանս կայցեն , լուիցեն ձայնի նր , և ե-
կեսցեն արտաքս . որոց բարիս գործեալ
իցէ՝ 'ի յարութի կենաց . և որոց զչար ա-
րարեալ 'ի յարութի դատաստանաց :

Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ .

այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դատաստանն
իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ,
այլ զկամս այնորիկ՝ որ առաքեաց զիս ։
Յետոյ մտանեն յեկեղեցին ասելով շրկն
դձ, Փառաբանական հօր որդի՝ որ վմ"։
Հրեշտակապետին իջումն՝ որ ըզպահա"։
Եւ ըսքանչելի սբ կանանցն՝ աւետարա"։
քարոզ՝ Մէ խաչիւս. մղ՝ Պահպանիչ և ։
և այս կատարի ժամերգութե պաշտօն ։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐՆ

Յետ վախճանի սովորութե, զկնի սեղյ սպա-
տարագին ի սբ Ս.Աթոռն լինի հանդիսա-
ւոր մեծ Թաբօր, ի փառս և ի պատիւ
կենսաձիր յարութեն քնի այ մերոյ ։

Երկնային երթման անդ առ ՚ի կատարել
զծառայութեան պաշտօն. և ՚ի գիշերի հըր-
կամն լինի. նոյնպէս և առաւօտուն զըր-
նան և մինչև ի սուրբ պատարագ ՚ի խորանն
մեր. բայց ՚ի վերաբերելն զընծայն, զըր-
նեն ՚ի վերայ սեղանոյն տէրունոյն քօղ. խոն-
կարհեալ ածրիանագն, և ապա ՚ի վեր առ-
նուն ամենի. և յետ սրբոյ պատարագին
ամառնացրեն զանձանատան, առաջի զըր-
բան նոյն տէրունոյն.

ԿՈՉՆՈՑ ՍՐԲՈՑ ԳԱԼՍՏԵԱՆ ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԻՆ

Գնեմ ՚ի սուրբ փրկիչն, զենիս ժամեր-
գութեան նախատօնակի առնեն, շրկն առ,
Օրհնութիւն զգաստացուցին, խուր սարօքն.
ապա ՚ի ծունկս անկեալ Տէր ողորմեա:
և այլն.

Իսկ զկնի առաւօտու ժամուն՝ վերստին երթան անդ 'ի տեղ փրկչին առ 'ի մատուցանել զհանդիսաւոր սուրբ պատարագն . և յետ սուրբ պատարագին , անդաստան . և ապա առն հանգստեան :

ՅՈՒԹՆԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ
ՈՐ Է ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Մեծաւ հանդիսիւ տօնեն զտօն ամենասուրբ երրորդութե՛ն 'ի սուրբ աթոռն . ժՀ դձ , Նուաքելոյ աղաւնոյ : հարց դձ , Որ բոլորից ես պատճառ : Սէ ժծ՝ որ եկիր և հանգեար յառաքեալսն : սաղմոս , Թեւք աղաւնոյ . Յարիցէ ժծ : առակ իմաս՛՛ , Քանզի ճաճանչ է . 7 գլ՝ 25 համր : վերջ , և մարգարէս առնէ . 27 համար : մարգարէ անդեայ , Եւ զարթիցց տէր . 1 գլուխ՝ 14 համր : վերջ , առէ տէր ամե-



Նա

նաւակատ․ 2 գլուխ՝ 5 հմր ։ պօղոսի առ կորն,
Զի ով ոք ի մարդկանէ․ 2 գլուխ՝ 11 հմր ։
վերջ, քննէ զամ․ 15 հմր ։ ալէ՛՛ ձայնիւ,
Հոգի քո բր ե ։ աւետարան յօհաննու,
Ի վերջնում աւուր․ 7 գլուխ՝ 37 հմր ։
վերջ, դալոց է քն․ 42 հմր ։ Խորհ՛՛ ։ Սեցա ։
Ի ճաշուն՝ զոյգ կոչնակ ։ ժամամուտ,
Այսօր ի հրեղէն ։ շրկն բձ, Որ ի հա
րաշարժ ։ կամ՝ առձ, Որ յանմի ես ։ Գ․ կրք
եւ Աւետարան՝ ըստ պատշաճի յարուե է ։
սրբասացութիւն, Այսօր իջեալ ։
Երեկոյին՝ սաղմոս ձայնիւ, Թուեք ա
ղաւնւոյ ։ փոխ, Յարիցէ աձ ։ աւետրն
ղուկասու, Եւ դարձաւ յս․ 4 գլուխ՝
14 համար ։ վերջ, ի բերանոյ նր․ 22 հմր ։
մեսեդի՝ յարուե ։ հմբ բկ, Երրորդութին ։
սղմս, Հոգի քո բր ։ Տր լուր ։ Աւետրն ։
քրզ՝ Գոհաբանելով․ Սեցա․ առ՝ Խաղաղ՛՛ ։

Յայսմ երեկոյիս դնան 'ի սբ. Հրեշտակապետի վանս. Նախատօնակ. և գիշերային ժամերգութիւնք անդ կատարին, և սբ. պատարագն մատչի 'ի նորան սբ̃ց Հռիփսիմեանց։

Սոյնպէս և երկրորդ ծաղկազարդի շաբաթ երեկոյին՝ երթան 'ի սբ. Հրեշտակապետ, և նախատօնակ առնեն, շ̃րկն դ̃կ, Մեծահրաշ, իւր սարօքն. և գիշերային ժամերգութիւնն անդ կատարի. և երբեմն ատենախօսութի̃. և սբ. պատարագն յաւագ խորանն մատուցանի։

Դ. ՏՕՆԻ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Շաբաթ երեկոյին զոյգ կոչնակ. զկնի հայր գթածին 'ի ծունկս անկեալ Տէր ողորմեա՛։

'Ի ճաշուն՝ ևս զոյգ կոչնակ։

Ուրբաթ երեկոյին ի մեր էջմիածին նա-
խատօնակ լինի , շարական մի , Իգքեղ
քաղաք մի , եւ սարօքն :

Շաբաթ երեկոյին՝ զոյգ կոչնակ . զկնի
հայր գթածին , ի ծունկս անկեալ Տէր
ողորմեա՛ : քո՛ղ՝ Կենդ՛՛ . Աղեցն . մի՝ Օծա՛՛ :
ապա նախատօնակ առնեն վասն սբյն յա-
կոբայ մն եղբօր առաքելոյն , ըստ որում
ի սոյն աւուր նուաւ յաթոռն մբ եկեղ .
շրկն դձ , Յաղթօղ գլուխ , եւ սարօքն :
մաղթանք , Բո մծ մեր : քո՛ղ՝ Սբ Հգնե՛ :
մի՝ Որ ընտրեցեր և : եւ յետոյ զորբագան
Պատրիարգն տանին ի մեծ հարանն ասելով
շրկն մձ , Որ ի լերինն : սոյնպէս եւ յա-
ւաւօտուն՝ յաւարտ մի պատարագին :

Ուրբաթ երեկոյին ՚ի սուրբ Էջմիածին նա֊
խատօնակ լինի, շարական գ ձ, Ուրախ
լեր սուրբ եկեղեցի, Իւր սարօքն:

Շաբաթ երեկոյին գնան ՚ի սուրբ Աստուածածին,
եւ զսրբազան Պատրիարգն հանդիսիւ ի֊
ջուցանեն ՚ի սուրբ գերեզման ասելով շարկն
դ ձ, Այսօր ժողովեալ սրբոցն: ապա՝ գ ձ,
Ուրախ լեր սուրբ. եւ այլն: եւ յետոյ պաշտեն
զերեկոյեան ժամերգութիւն. ոմանք դառ֊
նան ՚ի սուրբ յակոբ, եւ ոմանք ՚ի գիշերի
անդ եւս կատարեն զպաշտօն ժամերգութեան
հսկմանն:

Եւ զկնի առաւօտեան ժամերգութեան վե֊
րոյին երթան անդ ՚ի սուրբ Աստուածածին, եւ հան֊
դիսաւոր զսուրբ պատարագն մատուցանեն ՚ի վերայ
սրովբէասպաս գերեզմանի սուրբ Աստուածածնին:

Ըստ նախնի սովորութեն երթան 'ի սուրբ գէորգ 'ի վանս խալտոց , և նախատօնակ առնեն . սոյնպէս և յառաւօտ յետ գիշերային ժամերգութե , գնան անդ 'ի մատուցանել զսուրբ պատարագն . և համառօտ ծանուցումն լինի յաղագս հրաշից սրբոյն և կամաւոր ողորմութե ։

Դ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑՆ

Ուրբաթ երեկոյին գնան 'ի վանս հրեշտակապետին . նախատօնակ առնել . գիշերային ժամերգութի անդ կատարի . աշխարհամ երգոյն , միոյ տանն երեք տր ողորմեա՛ յառաջ և երեք յետոյ ասեն . և հանդիսաւոր սբ պտրգն յաւագ խորանն մատչի ։

Սրբազան Պատրիարքն մեծաւ հանդիսիւ տանին 'ի Սբ. Եկեղեցին ասելով շրկն Դէձ , Հրաշափառ ծբթ · և այլն ։ և յետ ժամերգութե տանին 'ի պատրիարգարանն ։ Այնպէս և 'ի տօնի որդւոյն որոտման · և զկնի սբյ պատարագին Թաբօր ։

Յաւուրս առաջաւորաց , մեծի պահոց , և աւագ շաբաթու՝ բշ , գշ , և դշ , հանգստեան ոչ առնի ։

ՆԱԽԱՏՕՆԱԿ ՅԱՅՍՄԱՒՈՒՐԱՑ

Որ 'ի տարւոջն երիցս լինի , և այն նախ քան զժամերգութիւն · զյայսմաւուրն սրբազան Պատրիարքն ընթեռնու · և ապա տանին նմա շուրջառ՝ խաչ և գաւազան խընկօք և մոմեղէնօք ելանեն յատեան · իսկ



այլ

այլ կարգաւորք միայն մոմ ՚ի ձեռին պար-
առեալ դասադաս երգեն ըստ պատշաճի ։

Առաջին՝ ՚ի փետրուարի 21 ։ ՚ի նոր գլխա-
դիրն լինի , վ՟ս որդւոց որոտման՝ սբ՟յն յա-
կոբայ մեծի առաքելոյն , և յովհաննու
աւետարանչին ․ շ՟րկն դ՟կ , Որ էն յէու՟ե ,
իւր սարօքն ։

Երկրորդ՝ ՚ի յուլիսի 11 ։ ՚ի նոր կարապե-
տի խորանն , սակս ծննդեան սբ՟յն յովհան-
նու կարապետին ․ շ՟րկն ա՟կ , Արեգականն
արդարու՟ե , իւր սարօքն ։

Երրորդ՝ ՚ի հոկտեմբերի 23 ։ յաւագ
խորանն , վասն սբ՟յն յակոբայ տ՟ն եղբօր
առաքելոյն ․ շ՟րկն դ՟ձ , Յաղթօղ զօրաւ ,
իւր սարօքն ։

---

Ի նոր ծննդեան երեկոյին զսրբղին հան-
դիսիւ տանին ՚ի նոր եկեղեցին ․ զի եթէ
՚ի բեթղեհէմ գնայ , ՚ի գալն՝ յայնմ երե-
կոյի տանին յեկեղեցին ։